# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/48 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **20 մայիսի 2025թ.**

2025թ. ապրիլի 30 - մայիսի 20-ը ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ քիմիական նյութերի ձեռքբերման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/48 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Գ. Թովմասյան ՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Բուսաբուծության և հողագիտության ամբիոնի, |
| Մ. Դավթյան ՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Բուսաբուծության և հողագիտության ամբիոնի մասնագետ : |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Գ. Թովմասյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ա. Թադևոսյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի երկու անդամները, բացակայում էր «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ագրոնոմիական ֆակուլտետի դեկանի տեղակալ Ս. Մամաջանյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին
2. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգը չկայացած հայտարարելու, հայտարարության տեքստը հաստատելու մասին:

4. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025 թվականի ապրիլի 30-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 11:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին (ՀՀ դրամ) | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր առավելագույն գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Ֆիլտրի թուղթ | - | Չկայացած | 14000 |
| 2 | Ծծմբական թթու H2S04 (Ֆիքսանալ) | - | Չկայացած | 8000 |

ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/48 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2025 թվականի ապրիլի 30-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ համակարգի միջոցով գնահատման ենթակա հայտեր առկա չեն:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2025 թվականի մայիսի 19-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:
2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարության տեքստերը:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 4. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Գ. Թովմասյան ______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Մ. Դավթյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Թադևոսյան ______________